

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 4 - Լ

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման մասին հաղորդումը / զեկուցող՝ աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյան/՝

**Գիտական խորհուրդը որոշում է՝**

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ՀՊՄՀ ֆակուլտետների խորհուրդներին և ֆակուլտետների ու համահամալսարանական ամբիոններին՝

2.1. անդրադարձ կատարել ՀՊՄՀ 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրին և այդ Ծրագրի կատարման գործողությունների պլանին, ինչպես նաև ՀՊՄՀ գիտական խորհուրդի 2015 թվականի մայիսի 31-ի որոշմամբ հաստատված Համալսարանի 2015-2020թթ. միջազգայնացման քաղաքականությանն ու ռազմավարությանը, հիմք ընդունելով այդ փաստաթղթերը որպես ՀՊՄՀ միջազգայնացման ուղեցույցեր,

2.2. նախապատրաստել ՀՊՄՀ 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրից և այդ Ծրագրի կատարման գործողությունների պլանից, ինչպես նաև ՀՊՄՀ գիտական խորհուրդի 2015 թվականի մայիսի 31-ի որոշմամբ հաստատված Համալսարանի 2015-2020թթ. միջազգայնացման քաղաքականությանից ու ռազմավարությանունից բխող աշխատանքային ծրագրեր՝ առաջարկելով միջազգային և տարածաշրջանային մակարդակներում համադրելի մրցունակ մասնագիտական կրթական ծառայություններ,

2.3. ՀՊՄՀ մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման հարցում առաջնորդվել ՀՊՄՀ 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրով որոշված Համալսարանի առաքելությամբ նախանշված շրջանակով,

2.4. որպես ՀՊՄՀ մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման նախընտրելի /սակայն ոչ սպառիչ/ ուղղություններ դիտարկել այնպիսի համատեղ մասնագիտական կրթական ծրագրերի ստեղծումը և իրականացումը, որոնք՝

2.4.1. համապատասխանում են ազգային և միջազգային աշխատաշուկաների բարձր պահանջարկին,

2.4.2. ընձեռում են օտարերկրյա բուհի հետ համատեղ կրթական ծրագրի իրականացման արդյունքում երկակի դիպլոմի շնորհման հնարավորություն կամ մեկ ՀՊՄՀ-ի դիպլոմի շնորհման հնարավորություն՝ միաժամանակյա սերտիֆիկատի շնորհմամբ համագործակից բուհից,

2.4.3. ապահովում են օտարերկրյա բուհի հետ համատեղ առարկայախմբի /մոդուլ/ կամ առարկայախմբերի դասավանդումը,

2.4.4. ապահովում են ցանցային մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը,

2.4.5. ապահովում են մագիստրոսական թեզերի համատեղ ղեկավարումը,

2.5. ընդլայնել /կամ ստեղծել/ համագործակցային կապերը եվրոպական, եվրասիական և /կամ/ այլ տարածաշրջանների բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող առաջատար, միջազգայնորեն ճանաչված և բարձրագույն կրթության միջազգային տարածքում մրցունակ գիտական և գիտաուսումնական կառույցների հետ,

2.5.1. մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման հարցում նախապատվելի համարել ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, դասախոսների, վարչական անձնակազմի անհատական կրեդիտային շարժունությունը ապահովող ծրագրերը,

2.5.2. օտար լեզվի կիրառմամբ նոր համատեղ մասնագիտական կրթական ծրագրի ստեղծման և ներդրման կամ ՀՊՄՀ-ում գործող ծրագրի միջազգայնացմանը կամ այդպիսի ծրագրի միջազգայնացման զարգացմանն ուղղված աշխատանքներում /առարկայախմբերի, ցանցային մասնագիտական կրթական

ծրագրերի, մագիստրոսական թեզերի համատեղ դեկլավարում և այլ/ ուսումնասիրություններ կատարել ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, նպատակ հետապնդելով պարզելու այդ ծրագրի պահանջարկվածության աստիճանը, հիմնավորել այն ներդրելու կամ վերանայելու անհրաժեշտությունը, մարդկային և այլ ռեսուրսները, պլանավորել ներդրման ժամկետները և ուղիները,

2.5.3. միջազգայնացման գործընթացում գտնվող և /կամ/ միջազգային տարրերով մասնագիտական կրթական ծրագրերում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության հարցում հաշվի առնել օտար լեզվով դասավանդելու կարողությունները:

3. ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների վարչությանը և ՀՊՄՀ կրթության բարեփոխումների և որակի վարչությանը՝

3.1. աջակցել ՀՊՄՀ ֆակուլտետների խորհուրդներին և ֆակուլտետների ու համահամալսարանական ամբիոններին մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման հարցում՝ համապատասխան ուսումնական պլանների, ՄԿԾ մասնագրերի, առարկայական կրթական ծրագրերի և առարկայախմբերի /մոդուլների/ ստեղծման, վերանայման, որակի ապահովման, ներդրման, գործարկման և բարեփոխման, ինչպես նաև իրենց իրավասության շրջանակում այլ հարցերում,

3.2. միջազգայնացման գործընթացում գտնվող մասնագիտական կրթական ծրագրերով անցում կատարել ուսումնական բեռնվածքի անհատական հետազոծի ներդրմանը:

4. Միջազգային համագործակցության բաժնին՝

4.1. հայտի առկայության դեպքում ՀՊՄՀ համապատասխան ստորաբաժանումների, դասախոսների, ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, վարչական կամ այլ շահագրգիռ անձանց համար ողջամիտ ժամկետներում անցկացնել սեմինարներ և /կամ/ տրամադրել անհրաժեշտ նյութեր, որոնք բացահայտում են՝

4.1.1. ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, դասախոսների և բուհի աշխատողների անհատական ակադեմիական շարժունության խնդիրները, մեթոդները, ձևերը և իրականացման հմտությունները,

4.1.2. համատեղ միջազգային մասնագիտական կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը և մեթոդները,

4.1.3. օտարերկրյա համագործակից-բուհերի ընտրության մեթոդաբանությունը,

4.1.4. ՀՊՄՀ և օտարերկրյա բուհերի կրթական ծրագրերի համադրելիության խնդիրները,

4.2. իր իրավասության շրջանակում արագ արձագանքել և աջակցել ՀՊՄՀ համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման գործընթացներին:

5. Սույն որոշման կազմակերպումը վերապահել՝

5.1. ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնին՝ մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման մեթոդաբանության և միջազգային համագործակցության կազմակերպական հարցերով,

5.2. ՀՊՄՀ կրթության բարեփոխումների և որակի վարչությանը՝ մասնագիտական կրթական ծրագրերի միջազգայնացման բովանդակային և կազմակերպական հարցերով:

6. Սույն որոշման իրագործումը հանձնարարել ֆակուլտետների խորհուրդներին, ամբիոններին և համահամալսարանական ամբիոններին՝ ՀՊՄՀ կրթության բարեփոխումների և որակի վարչության և ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի հետ համատեղ:

7. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրենց իրավասության շրջանակում վերապահել ՀՊՄՀ ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյանին և ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյանին:

8. Սույն որոշման կատարման ընթացքին անդրադառնալ 2018 թվականի ապրիլ ամսին: